

**«ՌԻՍԱՐ» ՍՊԸ-ՈՒՄ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԶՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԶԻՆԱԿԱՆ ԶԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Զրապարակային պայմանագիր՝ «Ուսար» ՍՊԸ-ի և Օգտատիրոջ միջև անուղղակի կնքվող պայմանագիր, որը կնքվում է Օգտատիրոջ կողմից համաձայն սույն պայմանագրի կետերի վճարում կատարելու և «Ուսար» ՍՊԸ-ի հաշվեհամարին տվյալ վճարումը մուտքագրվելու պահից:
- Ծառայություն մատուցող՝ «ՌԻՍԱՐ» ՍՊԸ:
- Օգտատեր՝ varord.am վեբ կայքում կամ AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածներով գրանցված անդամ՝ ով նշված վեբ կայքով կամ հավելվածներով վճարել է Ծառայություն մատուցողի ուսումնական ծրագրերից օգտվելու համար:
- Ուսումնական ծրագիր՝ Վարորդական իրավունքի որակավորման տեսական քննությանը նախապատրաստվելու ուսումնական ծրագիր՝ համաձայն հավելված 1-ում ներկայացված բովանդակության:
- Ուսումնական սրահ՝ Սրահ որտեղ տեղադրված են անհրաժեշտ համակարգչային ծրագրերով ապահովված համակարգիչ(ներ), որով Օգտատերը կարողանում է օգտվել Ուսումնական ծրագրից:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- Զրապարակային պայմանագրի համաձայն, Ծառայություն մատուցողը պարտավորվում է Օգտատիրոջը ապահովել հասանելություն Ծառայություն մատուցողի ուսումնական ծրագրին՝ համաձայն Զրապարակային պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Ուսումնական ծրագիրը և դրանից օգտվելու կարգը» և «Դասաժամերի գրանցման/ չեղարկման և իրացման կարգը» հավելվածների պայմանների:
- Վճարման, «Ուսումնական ծրագիրը և դրանից օգտվելու կարգը» և «Դասաժամերի գրանցման/ չեղարկման և իրացման կարգը» հավելվածների պայմանները ապահովելու համար Ծառայություն մատուցողը կիրառում է varord.am վեբ կայքը կամ AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածները: Ամենատարբեր պատճառներով AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածների ժամանակավորապես չգործելը հիմք չէ սույն պայմանագրի կամ դրան կից հավելվածների պայմանները չկատարելու կամ այլ կերպ մեկնաբանելու համար: AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածների ժամանակավորապես անհասանելի լինելու դեպքում միշտ կարելի է օգտվել varord.am վեբ կայքից:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ և ՈՒԺԸ ԿՈՐՑՆԵԼԸ

- Զրապարակային պայմանագիրը կողմերի համար իրավական ուժ է ստանում Օգտատիրոջ վճարած գումարը «Ուսար» ՍՊԸ-ի հաշվեհամարին փոխանցվելուց հետո, եթե վճարումը իրականացվել varord.am վեբ կայքի կամ AppStore-ում և Google Play-ում տեղակայված varord.am հավելվածների վճարման գործիքակազմով:
- Մինչ վճարումը, Օգտատերը համակարգում պետք է գրանցի իր անունը, ազգանունը և հեռախոսահամարը: Եթե վճարողի անձնական տվյալները չեն համընկնում Օգտատիրոջ տվյալների հետ, վճարումն ընդունվում է ի օգուտ այն Օգտատիրոջ, ում մուտքագրումով հասանելի են դարձել varord.am վեբ կայքի կամ AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածների վճարման գործիքները:
- Օգտատերը Զրապարակային պայմանագրի կնքմամբ հաստատում է, որ ինքն ամբողջությամբ ծանոթացել է Զրապարակային պայմանագրի դրույթներին, դրան կից հավելվածներին, և դրանցում ներկայացված պայմաններն իր համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի են, ու Զրապարակային պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը բխում է իր իրական շահերից:
- Սույն պայմանագրի դրույթները կոնկրետ օգտատիրոջ մասով կորցնում են ուժը, եթե այդ օգտատիրոջ վճարումից անցել է 4 ամիս, անկախ այն հանգամանքից, թե որքանով է օգտատերը սպառել նախապես պատվիրված դասաժամերը:
- Սույն պայմանագրի դրույթները կոնկրետ օգտատիրոջ մասով կորցնում են ուժը, եթե սույն պայմանագրում նախատեսված հիմքերով կողմերից մեկը լուծում է պայմանագիրը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ

- Դասընթացի համար կարելի է վճարել երկու սկզբունքով.
 - յուրաքանչյուր դասաժամի համար 3500 ՀՀ դրամ
 - փաթեթի համար 39900 ՀՀ դրամ, որը ներառում է 18 դասաժամ: Փաթեթի արժեքը կարող է փոխվել, գեղջերի ու գնի փոփոխությունն ենթադրող ակցիաների ժամանակ:
- Վճարումը կարող է իրականացվել միայն varord.am վեբ կայքի կամ AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածների վճարման գործիքակազմով:
- Օգտատիրոջ կողմից վճարված գումարի ամբողջական կամ մասնակի վերադարձի պահանջ կարող է ներկայացվել.
 - Եթե Օգտատերը չի օգտվել սույն պայմանագրով նախատեսված Ուսումնական ծրագրից (Ծառայությունից օգտվել է համարվում նաև դասաժամի գրանցումը ու այն բաց թողնելը, կամ դասաժամի գրանցումը և չեղարկումը, եթե այն գտնվում է «չեղարկված սպասումով» կամ «բաց թողնված» կարգավիճակում), վճարումից հետո 14 օրվա ընթացքում Ծառայություն մատուցողից կարող է պահանջել վճարված գումարի ամբողջական վերադարձ:
 - Եթե Օգտատերը օգտվել է ծառայությունից և որոշել է ընդհատել այն, կարող է պահանջել գումարի մասնակի վերադարձ: Վերադարձվող գումարի հաշվարկը կատարվում է հետևյալ սկզբունքով. Վճարված գումար - իրացված ժամեր*3500: (օրինակ. եթե Օգտատերը ի սկզբանե վճարել է 39900 ՀՀ դրամ փաթեթի համար, ստացել 15 դասաժամ մասնակցության իրավունք, սակայն 5-րդ իրացված դասաժամից հետո որոշել է դադարեցնել ու գումարի հետվերադարձի պահանջ է ներկայացրել, ապա վերադարձվող գումարի չափը կլինի 39900-17500|5*3500| =22400 ՀՀ դրամ): Իրացված դասաժամերին են հավասարեցվում «չեղարկված սպասումով» և «բաց թողնված» կարգավիճակում գտնվող դասաժամերը:
- Գումարի հետվերադարձը կարող է իրականացվել միայն այն քարտատիրոջ հաշվին, ում քարտից կատարվել է վճարում ի օգուտ Օգտատիրոջ: Օգտատերը իրավունք չունի պահանջել վերադարձնել գումարը այլ քարտի կամ հաշվեհամարի կամ կանխիկով կամ ցանկացած այլ տարբերակով:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ծառայություն մատուցողը պարտավոր է.
 - Ապահովել մատուցվող ծառայությունից օգտվելու համար Օգտատիրոջ գրանցած տվյալների գաղտնիությունը՝ համաձայն կայքում ներկայացված «Տվյալների գաղտնիության քաղաքականության»:
 - Օգտատիրոջը ապահովել հասանելիություն ուսումնական ծրագրերին համաձայն «Ուսումնական ծրագիրը և դրանից օգտվելու կարգը» և «Դասաժամերի գրանցման/չեղարկման և իրացման կարգը» հավելվածի պայմանների:
 - Ապահովել առցանց գործիքակազմ դասաժամերի գրանցման կամ չեղարկման համար:
 - Օգտատիրոջ դիմումի համաձայն վերահաշվարկել և վերադարձնել ծառայության համար վճարված գումարը կամ դրա մի մասը՝ համաձայն սույն իրապարակային պայմանագրի 4-րդ մասի պայմանների:
- Ծառայությունն մատուցողն իրավունք ունի.
 - Դադարեցնել Օգտատիրոջ դասընթացը, եթե վերջինս խախտում է «Ուսումնական ծրագիրը և դրանից օգտվելու կարգը» հավելվածի պայմանները: Այս դեպքում Օգտատերը չի կարող պահանջել գումարի հետվերադարձ, քանի որ իր կողմից խախտվել են «Ուսումնական ծրագիրը և դրանից օգտվելու կարգը» հավելվածի պայմանները:
 - Դադարեցնել Օգտատիրոջ դասընթացը և լուծել պայմանագիրը համաձայն «Ծառայության արժեքը և վճարումը» բաժնի դրույթների, եթե Օգտատիրոջ ներկայացրած պահանջները՝ սույն պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը դարձնում են անհնար:
 - Չեղարկել Օգտատիրոջ ընթացիկ կամ սպասվող դասաժամը, եթե դրա ապահովումը անհնար է դարձել ինտերնետ հասանելիության կամ էլեկտրական հոսանքի բացակայության պատճառով: Այս պայմանով դասաժամի չեղարկումը չի կարող նվազեցնել Օգտատիրոջը հասանելի դասաժամերի քանակը:

6. ՕԳՏԱՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Օգտատերը պարտավոր է.
 - Պահպանել ոչ միայն սույն պայմանագրի, այլ նաև սույն պայմանագրին կից հավելվածների պայմանները:
 - varord.am վեբ կայքի կամ AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածների միջոցով մուտքագրել հավաստի տվյալներ: Օգտատիրոջ գրանցած տվյալների

- ու նրա փաստացի անձնագրային տվյալների անհամապատասխանության դեպքում պատասխանատվությունը կրում է Օգտատերը:
 - պահպանել իր տվյալների գաղտնիությունը:
 - իր օգտահաշվից այլ անձին հասանելիության վերաբերյալ կասկած ունենալու դեպքում անմիջապես այդ մասին տեղեկացնել Ծառայություն մատուցողին:
 - ոչ մի պայմանով 3-րդ անձի չփոխանցել Ուսումնական ծրագրերին հասանելություն ապահովող Նույնականացման կողը:
 - Դասընթացի ժամանակ իրեն տրամադրված գույքն օգտագործել ըստ նշանակության: Օգտատիրոջ կողմից Ծառայություն մատուցողի գույքը ըստ նշանակության չօգտագործելու դեպքում փչացնելու ողջ պատասխանատվությունը կրում է Օգտատերը:
- Օգտատերն իրավունք ունի.
 - Դեռ պահանջել վճարված գումարը ամբողջությամբ վճարումից հետո 14 օրվա ընթացքում, եթե չի օգտվել ծառայությունից: Ծառայությունից օգտվել է համարվում նաև դասաժամի գրանցումը ու այն բաց թողնելը, կամ դասաժամի գրանցումը և չեղարկումը, եթե այն գտնվում է «չեղարկել սպասումով» կամ «բաց թողնված» կարգավիճակում:
 - Միակողմանի դադարեցնել դասընթացը և Ծառայություն մատուցողից պահանջել վերահաշվարկել և վերադարձնել գումարի մի մասը՝ համաձայն սույն հրապարակային պայմանագրի 4-րդ մասի պայմանների:

7. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՅՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

- Ծառայություն մատուցողը, առանց մյուս կողմի հետ համաձայնեցնելու կարող է փոփոխություններ կատարել հրապարակային պայմանագրի դրույթներում: Փոփոխված դրույթները չեն կարող ունենալ իրավական ուժ, եթե Օգտատերը հրապարակային պայմանագրի դրույթների մասին իր համաձայնությունը հաստատել է մինչև դրանք փոփոխվելը: Սույն տեքստային ներկայացմանը զուգահեռ, վերջում կարելի է գտնել Հրապարակային պայմանագրի բոլոր տարբերակները PDF ձևաչափով՝ ստորագրված «ՌԻՍար» ՍՊԸ-ի տնօրենի կողմից:

8. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ/

- Հրապարակային պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Հրապարակային պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ընդունված ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Հրապարակային պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Հրապարակային պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Հրապարակային պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

- Օգտատիրոջ որոշ գործողություններ կարող են ծանուցվել կարճ հաղորդագրությունների կամ էլ փոստի միջոցով: Եթե գործողությունից անմիջապես հետո Օգտատերը կարող է իմանալ դրա մասին, ապա ծանուցում չի ուղարկվում (օրինակ, վճարումը հաստատվելու կամ չընդունվելու մասին Օգտատերը տեղեկանում է անմիջապես և ծանուցում ուղարկելու անհրաժեշտություն չի ծագում): Բոլոր դեպքերում, երբ Օգտատերը չի կարող իմանալ իր կատարած գործողության անմիջական արդյունքը (հետևանքը), Ծառայություն մատուցողը պարտավոր է ուղարկել ծանուցում: Պետք է հաշվի առնել, որ տեխնիկական առանձնահատկություններից ելնելով՝ Ծառայություն մատուցողը չի կարող երաշխավորել էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսահամարով ուղարկված հաղորդագրությունների ստացումը Օգտատիրոջ կողմից:

ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ և ԴՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ուսումնական ծրագիրը բովանդակում է

- Տեսադասեր ճանապարհային երթևեկության կանոնների, կշանների, գծանշումների, վարորդի իրավունքների ու պարտականությունների, տրանսպորտային միջոցի շահագործումն արգելող անսարքությունների ու երթևեկության անվտագության սկզբունքների մասին:
- Գիտելիքների ստուգման թեստային հարցեր
- Թեստային հարցերին կից մեկնաբանություններ
- Բովանդակության և հարցերի թեմատիկ խմբավորում, արդյունավետության գնահատման գործիքներով
- Վարորդական իրավունքի որակավորման տեսական քննության թեստերի տիպային օրինակներ
- Գնահատման գործիքներ Օգտատիրոջ գիտելիքները ստուգելու համար:

Այս բովանդակությունից Տեսադասերը և Թեստային, քննական հարցերի մեկնաբանությունները հասանելի են միայն ուսումնական սրահներում:

Ընդ որում թեմատիկ դասերը իրենց տեսադասերով հասանելի են միայն հստակ հերթականությամբ: Թեմատիկ յուրաքանչյուր հաջորդ դասը ակտիվանում է միայն նախորդը դիտարկելուց հետո:

Հասանելիությունը ուսումնական ծրագրին

Վճարում կատարելը բավարար չէ ուսումնական սրահում ծրագրերին հասանելիություն ստանալու համար: Երբ Օգտատերը ուսումնական սրահ է այցելում առաջին անգամ, իր հետ պետք է ունենա վավեր անձնագիր կամ նույնականացման քարտ և հեռախոս՝ հասանելի այն հեռախոսահամարով, որը varord.am վեբ կայքում կամ AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածներում գրանցվել է որպես անձնական տվյալ: Անձնագրի կամ նույնականացման քարտի բացակայության, ինչպես նաև նախապես գրանցած հեռախոսահամարի անհասանելիության դեպքում Օգտատիրոջ հասանելիության ակտիվացումը կդառնա անհնար, որի պատասխանատվությունը կրում է օգտատերը:

Ուսումնական ծրագրին հասանելիություն ստանալու համար համակարգ պետք է մուտքագրվի վերջինիս լուսանկարը, անձնագրի սերիան և համարը, և անձնագրի լուսանկարը (անձնագրի երկրորդ էջը կամ նույնականացման քարտի դիմերեսը): Եթե Օգտատիրոջ գրանցած անունը և ազգանունը նույնական չեն անձը հաստատող փաստաթղթի հետ, ապա մեր աշխատակիցը կարող է փոխել այդ տվյալները:

«Ուսար ՄԴԸ»-ի աշխատակիցի կողմից համակարգում Օգտատիրոջ անձնագրային տվյալները ստուգելուց մուտքագրելուց հետո, varord.am-ում՝ միայն Օգտատիրոջը հասանելի տիրույթում հայտնվում է Նույնականացման կոդ, որի կիրառումը թույլ է տալիս հասանելիություն ուսումնական ծրագրերին:

Ուսումնական ծրագրից օգտվելը

Օգտատերը Ուսումնական ծրագրից կարող է օգտվել միայն ի սկզբանե գրանցած դասաժամին և ի սկզբանե գրանցած ուսումնական սրահում:

Ուսումնական ծրագրից կարող են օգտվել միայն տեսողության և/կամ լսողության խնդիրներ չունեցող անձինք:

Ուսումնական ծրագրից հնարավոր է օգտվել միայն ուսումնական սրահում տեղակայված համակարգից ու դրան կից պերիֆերիկ սարքերից: Որպես բացառություն, օգտատերը կարող է օգտագործել միայն իր անձնական ականջակալները (միայն լարային միացումով):

Արգելվում է հեռախոսով կամ ցանկացած այլ սարքով տեսագրությունը, ձայնագրությունը կամ տեսաձայնագրությունը:

Տեսագրելու, ձայնագրելու կամ տեսաձայնագրելու դեպքում դասընթացը կարող է դադարեցվել: Այս հիմքով դադարեցված դասընթացի մասով Օգտատերը գումարի հետվերադարձ չի կարող պահանջել:

Արգելվում է ծխելը ուսումնական սրահում:

Արգելվում է ուսումնական համակարգիչների մոտ ուտելը կամ սնունդը սեղանին դնելը:

Արգելվում է աղմկելը, ինչը կխանգարի մյուս սովորողներին:

Հավելված 2

ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ/ ԶԵՂԱՐԿՄԱՆ և ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Դասաժամերի գրանցումը կամ չեղարկումը իրականացվում է varord.am վեբ կայքում կամ AppStore-ում կամ Google Play-ում տեղակայված varord.am հավելվածների գործիքակազմի կիրառմամբ: Դասաժամի գրանցման կամ չեղարկման այլ տարբերակներ կիրառել հնարավոր չէ:

Օգտատերը նախ պետք է ընտրի ուսումնական սրահը (եթե ընտրելու հնարավորություն կա), հետո առաջարկվող դասաժամերից ընտրի իրեն հարմար տարբերակը, եթե դասաժամը հասանելի է (ներկայացված է կանաչ գույնով):

Օգտատերը գրանցված դասաժամին կարող է օգտվել Ուսումնական ծրագրից միայն այն ուսումնական սրահում, որը ընտրել է դասաժամի գրանցման ժամանակ:

Դասի չեղարկման գործիքները ևս պարզ են ու ինքնին հասկանալի:

Դասը հնարավոր է չեղարկել մինչև դրա մեկնարկի ժամը, եթե

- դասաժամի ամրագրումից անցել է ոչ ավել քան 15 րոպե,
- կամ մինչև դասի մեկնարկը կա 12 ժամից ավել ժամանակ:

Դասաժամի «բաց թողնված» կարգավիճակը նշանակում է, Օգտատերը գրանցված դասաժամին Ուսումնական սրահում տեղադրված համակարգչում չի մուտքագրել Նույնականացման կոդը: Նախապես գրանցված դասաժամերի իրացման տեսանկյունից, «Բաց թողնված» կարգավիճակով դասաժամը համարժեք է «կայացած» կարգավիճակ (Օգտատերը օգտագործել է դասաժամը) ունեցող դասաժամերին: Օրինակ՝ Օգտատերը նախապես վճարել է 18 դասաժամի համար, որից 16-ը օգտագործել է, իսկ երկուսը բաց է թողել: Սա նշանակում է իրացված դասաժամերից 16-ը ունի «կայացած» կարգավիճակ, երկուսը՝ «բաց թողնված», որոնց հանրագումարը 18 դասաժամ է: Հետևաբար օգտատերը սպառել է 18 դասաժամը, որի համար վճարել էր:

Օգտատերը գրանցված դասաժամից կարող է օգտվել մինչև դրա ավարտը ցանկացած պահի:

Մեկ դասաժամի տևողությունը 58-60 րոպե է: Դասաժամի սկիզբը՝ հաշվարկվում է գրանցված ժամից, անկախ այն բանից, թե որ պահին Օգտատերը կակտիվացնի այն:

Օգտատիրոջ ուշացումները իր պատասխանատվությունն են, և բաց թողնված րոպեները կամ դասն ամբողջությամբ վերականգնման կամ լրացման ենթակա չեն:

«ՈՒՍԱՐ» ՍՊԸ

ՀՎՀՀ՝ 01251991

Վեբ-կայք՝ www.varord.am